

Տրապիզոնից մինչև Սյուրմենեի հայկական շրջանի կենտրոնական Կաարա գյուղը շուրջ 8-մայր ճանապարհ է, որն անցնում է հետևյալ վայրերով՝ Տրապիզոն—Տրոնա—Յամպուլի գետ, ապա սուրն գետի ձախափնյա արահետով քարձրանում Մաղթելայի կամուրջը, որի արևելյան կողմի արահետներով հասնում է Կատրա Կա նաև ավելի կարճ՝ լեռնային ճանապարհ, որը բաժանվում է Տրոնայի արեւելքում ու Կաարուքսա գյուղի միջով բարձրանում Ղուռնայի սարը։ Սարն այս անունն ստացել է ճանապարհի եզրին գտնվող

սառնորակ աղբյուրի մոտ կառուցված զուռնայի (շրավաղանի) շնորհիվ։

Ղուռնայի արևելյան լանջերի դեմ-հանդիման տարածված էին Սյուրմենեի հայկական գյուղերը։ Ինք շավիղն իջնում է Յամպուլի գետը, որի ձախ ափին գտնվում է Մաղթել գյուղը։ Զավզոնա թուրքական գյուղի մոտ. փայտե կամուրջն անցնելով 1,5 ժամից արդեն Կատրան է։ Սյու ուղիով, շուրջ երկու ժամ կրճաավում է Տրապիզոն—Կատրա ճանապարհը։

4. ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑԱԾ ՀՈՒՑՆԵՐԻ ԳՅՈՒՂՆԵՐԸ

Կրոմ գավառակ։ Նույն տարիներին, երբ Սյուրմենեում ու մոտակա վայրերում հայոց մեջ ուսրափ էր տարածվել, Ղուռնա-օղլին մոլեռանդ սուլթանների ու մի խումբ հնիկների ուղեկցությամբ մտնում է Տրապիզոնի ու Գյումուշխանեի միջև գտնվող, շուրջ 2500 տնից բաղկացած հունական Կրոմ գավառակը։ Սպառնալիքի առկա նրանց ստիպում են մահմեդական դառնալ։ Սյուրմենեի գավառակի հայերին պատահած դեպքերից ահարեկված, կրոմցիք, ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու նպատակով, առեղծոս համաձայնվում են ընդունել մահմեդականությունը։ Եկեղեցիները մզկիթ են դարձնում, արտաքուստ կատարում մահմեդական կրոնի կարգը, իսկ հոգով՝ դեանափոր ազդեցության ներքո, տեղում շարունակում հարազատ կրոնական արարողություններն ու ժխտակատարությունները և հաստատ մնում իրենց հավատին։ Մոտ 100 տարի անց՝ XIX դ. սկզբներին, ստեղծված քաղաքական

նպաստավոր պայմանների շնորհիվ, նրանց հաջողվում է ամբողջությամբ վերականգնել իրենց աղջալին ու կրոնական ինքնուրույնությունը։

Խոնյա։ Կրոմի հեա միաժամանակ, հնիկների ու մոլլաների սպառնալիքի տակ, իսլամի կրոնն են ընդունում նաև Պլատանայի հառավային լեռնաշխարհում ապրող շուրջ 1000 տուն՝ Թոնյա գյուղախմբի հույները։ Սակայն սրանք չեն կարողանում հեռանալ Կրոմի օրինակին։ Այդ ժամանակից մնացել էին մահմեդական, թեպետ մինչև մեր օրերը (1915 թ.) պահպանել էին մայրենի լեզուն ու աղջալին բարբերը։

Սֆգիլ։ Ինչպես վերն աավց, Օֆ գավառակի հույները առաջիններից եղան մահմեդական կրոնն ընդունողների մեջ ու աղջպես չէ մնացին մինչև վերջ։ Նրանք շրջապատված լինելով թուրք ու լաղ աղջարենակչությամբ, հիմնականում թրքախոս ու շատերը մոլեռանդ մահմեդականներ էին դարձել։

5. ՅՈՄՈՒՐԱՑԻ ՎԻՃԱԿ

Գտնվում է Տրապիզոն քաղաքի հարավ-արեւելքում, Տեղերմեն-աերե (Ջրաղացների դեա) ու Յոմպուլի գետերի միջև ընկած լեռնաշխարհում, Հյուսիսային սահմանները ողողում է Սե ծովը, արեւելքից սահմանակից է Սյուրմենե, իսկ հարավ-արեւմուտքից՝ Ճենդլուզի վիճակներին։ Հարավից Սինջանի ու Այուրի լեռներով անջատված է Կյումուշխանե գավառի Սանդա հունական գյուղախմբից, հյուսիս-արեւմուտքում Տեղերմեն-աերե դեա է։ Վիճակն ունի իր ներքին երկու դեաերը՝ Կալաֆկան, որը ծով է թափվում դուրախամրի վարչական կենտրոն Տրոնայի մոտ, ու Շանա դեաը, որը ծով է հասնում առաջինից կես ժամ արեւմուտք, Կովաթա ևյուղով վայրում։ Շանա դեաըն ունի երկու վաակ՝ Կյուշանա և Սամարուքսա, որոնք իրար միանում են ծովափին մոտ 3 կմ ներքև։ Սամարուքսա վտակն իր հերթին ունի երկու էյուղ՝ Ծոշարա ու Մեծ Սամարուքսա։ Կալաֆ-

կա դեան սկիզբ է առնում ծովափից շուրջ 35—40 կմ հեռու գտնվող Սինջանի և Այուրի լեռներից, Կյուշանան՝ Ուլտաղի (ծովից 30 կմ հառակ), Ծոշարան՝ Ջաղրլի, Մեծ Սամարաքսան՝ Ճիկանոյի լեռներից։ Յոմուրայի անտառածածկ գլխավոր լեռներն են (հարավից հյուսիս)։ Կալաֆկա դեաի ընթացքում՝ Սիֆթերը, Կալաֆկան, Շանա դեաի հովտում՝ Ուլ-Տաղին, Արդուլան, Ծոշարան։

Յոմուրայի արևելյան մասում գտնվող հայկական գյուղերը տանող ճանապարհը Տրապիզոն քաղաքից մինչև Տրոնա-Ղովաթա անցնում է Տրապիզոն—Բաթում խճուղով, որին համընցիք անվանում էին Երաթումի ճոմփա։ Այս ալարահաղ թեքվում է դեպի հարավ՝ Տրոնայից Սպիոն—Սիֆթեր, Ղովաթայից Սինկիլա—Կյուշանա—Սարալլար—Սֆյանձ, իսկ արևմտյան գյուղերի ճանապարհն անջատվում է Տեղերմեն-աերեի